Կազմված է «12» «դեկտեմբեր» 2018 թ.

Բաղկացած է 6 (վեց) թերթից

Ընդամենը 2 օրինակ

ՕՐԻՆԱԿ 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Քառյակ մեդիա» փակ բաժնետիրական ընկերության հիմնադիրների «12» «դեկտեմբեր» 2018 թ. կայացած հիմնադիր ժողովի որոշմամբ արձանագրություն թիվ 1

տնօրեն՝ Հասմիկ Կամոյի Վարդանյան

«12» «դեկտեմբեր» 2018 թ.

_____

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից

«____» «_____» 2018 թ.

գրանցման համար՝ _____

հարկ վճարողի հաշվառման համար՝ _____

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿՆԻՔ

<<ՔԱՌՅԱԿ ՄԵԴԻԱ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2018

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. <<Քառյակ մեդիա>> փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ նաև՝ Ընկերություն) համարվում է շահույթ ստանալու նպատակով հիմնադրված առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ:

1.2. Ընկերության գտնվելու վայրն է Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Խորենացի 34:

1.3. Ընկերության ֆիրմային անվանումն է՝

<<ՔԱՌՅԱԿ ՄԵԴԻԱ>> փակ բաժնետիրական ընկերություն,

Close Joint Stock Company <<QUARTET MEDIA>>,

Закрытое акционерное общество <<КВАРТЕТ МЕДИА>>:

1.4. Ընկերության կրճատ ֆիրմային անվանումն է՝

<<ՔԱՌՅԱԿ ՄԵԴԻԱ>> ՓԲԸ,

CJSC <<QUARTET MEDIA>>,

ЗАО <<КВАРТЕТ МЕДИА>>:

1.5. Ընկերությունը կարող է ունենալ իր ֆիրմային անվանումը պարունակող դրոշմներ և ձևաթղթեր, ինչպես նաև խորհրդանիշ և օրենքով սահմանված կարգով գրանցված ապրանքային, առևտրային և այլ նշաններ:

1.6. Ընկերությունն իրավունք ունի օրենքին և այլ իրավական ակտերին համապատասխան ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ՝ մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, ունենալ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող դուստր և կախյալ տնտեսական ընկերություններ, ստեղծել հիմնարկներ:

1.7. Ընկերությունը պետք է ունենա ոչ ավելի, քան 49 բաժնետեր: Եթե բաժնետերերի թիվը 49-ից ավելի է դարձել, ապա Ընկերությունը մեկ տարվա ընթացքում պետք է վերակազմավորվի կամ համապատասխանաբար կրճատի իր բաժնետերերի քանակը: Հակառակ դեպքում այն ենթակա է լուծարման դատական կարգով:

1.8. Ընկերությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով: Ընկերությունը պատասխանատու չէ իր բաժնետերերի պարտավորությունների համար: Ընկերության բաժնետերերը պատասխանատվություն չեն կրում նրա պարտավորությունների համար և իրենց պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում կրում են Ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը:

1.9. Եթե Ընկերության անվճարունակության (սնանկության) պատճառ է հանդիսանում բաժնետերերի կամ այլ անձանց գործունեությունը (անգործությունը), որոնք ունեն Ընկերությանը կատարման համար պարտադիր ցուցումներ տալու իրավունք կամ Ընկերության գործունեությունն այլ կերպ կանխորոշելու հնարավորություններ, ապա Ընկերությանը պատկանող գույքը չբավարարելու դեպքում այդ բաժնետերերի կամ այլ անձանց վրա կարող է դրվել լրացուցիչ (սուբսիդիար) պատասխանատվություն՝ Ընկերության պարտավորությունների համար:

1.10. Բաժնետերերի կամ այլ անձանց գործողությունները (անգործությունը) համարվում են Ընկերության անվճարունակության (սնանկության) պատճառ միայն այն դեպքում, եթե նրանք օգտագործել են իրենց այդ իրավունքը կամ հնարավորությունները Ընկերությանը որոշակի գործողություններ կատարել կամ չկատարել պարտադրելու նպատակով, նախօրոք իմանալով, որ այդ պատճառով Ընկերությունը կհայտնվի անվճարունակության (սնանկության) վիճակում:

2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ

2.1. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 50,000 (հիսուն հազար) << դրամ, որը կազմված է 100 (հարյուր) հատ տեղաբաշխված հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերից, որոնց յուրաքանչյուրի անվանական արժեքը կազմում է 500 (հինգ հարյուր) << դրամ:

2.2. Ընկերության կանոնադրական կապիտալի բոլոր 100 բաժնետոմսերը տեղաբաշխված են, լրիվ վճարված են և պատկանում են՝

1) << քաղաքացի Արման Արմենի Սաղաթելյան /նույնականացման քարտի համարը [redacted] - 25 հատ սովորական (հասարակ) բաժնետոմս,
2) << քաղաքացի Միհրան Տարոնի Հակոբյան /անձնագրային տվյալներ՝ [redacted] - 25 հատ սովորական (հասարակ) բաժնետոմս,
3) << քաղաքացի Սամվել Ժորայի Ֆարմանյան /անձնագրային տվյալներ՝ [redacted] - 25 հատ սովորական (հասարակ) բաժնետոմս,

4) << քաղաքացի Կարեն Մանուկի Բեքարյան /նույնականացման քարտի համարը [redacted] / - 25 հատ սովորական (հասարակ) բաժնետոմս:

2.3. Ընկերությունում ստեղծվում է պահուստային հիմնադրամ՝ կանոնադրական կապիտալի 15 տոկոսի չափով:

2.4. Ընկերությունը կարող է փոփոխել (ավելացնել կամ նվազեցնել) իր կանոնադրական կապիտալի մեծությունը, որի մասին որոշումն ընդունվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից:

3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԸ

3.1. Ընկերության յուրաքանչյուր սովորական բաժնետոմս տալիս է իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը միևնույն իրավունքները:

3.2. Սովորական բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող բաժնետերը մեկամսյա ժամկետում առաջնահերթ կարգով իրավունք ունի ձեռք բերել ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերն օրենքով սահմանված կարգով:

3.3. Ընկերության բաժնետերն իրավունք ունի իր բաժնետոմսերը օտարել ընկերության մեկ կամ մի քանի բաժնետերերի, ինչպես նաև երրորդ անձանց: Ընդ որում, մյուս բաժնետերերն ունեն այդ բաժնետոմսերը նույն գնով ձեռքբերման նախապատվության իրավունք՝ ընկերության կանոնադրական կապիտալում իրենց բաժնետոմսերին համամասնորեն: Եթե ընկերության մյուս բաժնետերերը չեն օգտագործել բաժնետոմսերը գնելու իրենց նախապատվության իրավունքը կամ այն օգտագործել են մասամբ, ապա ընկերությունն ունի այդ բաժնետոմսերը նույն գնով ձեռքբերման նախապատվության իրավունք:

3.4. Երրորդ անձանց օտարման անհնարինության դեպքում բաժնետիրոջ պահանջով ընկերությունն ինքը պարտավոր է ձեռք բերել բաժնետիրոջ բաժնետոմսերը, այն իրացնել մեկ տարվա ընթացքում այլ բաժնետերերի կամ երրորդ անձանց կամ որոշում ընդունել ընկերությանը պատկանող բաժնետոմսերի մարման ճանապարհով ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման մասին:

3.5. Նախապատվության իրավունքի (այլ բաժնետերերի կողմից վաճառվող բաժնետոմսերի ձեռքբերման) իրականացման ժամկետը սահմանվում է մեկ ամիս:

4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

4.1. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը կառավարման բարձրագույն մարմինն է: Ընկերությունը պարտավոր է ամեն տարի գումարել բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողով ֆինանսական տարվա ավարտից հետո 6 ամսվա ընթացքում: Բաժնետերերի տարեկան ժողովից բացի գումարվող Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովները համարվում են արտահերթ: Ընկերության արտահերթ ժողովներ գումարվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար:

4.2. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությունները և որոշումներ ընդունելու կարգը սահմանվում են «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

4.3. Ընկերությունում խորհուրդ չի ձևավորվում:

4.4. Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Ընկերության միանձնյա գործադիր մարմինը՝ տնօրենը: Ընկերության տնօրենի իրավասությանն են պատկանում Ընկերության ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը, բացառությամբ «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքով և սույն կանոնադրությամբ ժողովի իրավասություն հանդիսացող հարցերի:

4.5. Ընկերության տնօրենը գործում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իր իրավասությունների շրջանակում՝մասնավորապես՝

1) տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Ընկերության անունից.
2) առանց լիազորագրի գործում է Ընկերության անունից.
3) ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում.
4) սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում աշխատանքային.
5) տալիս է լիազորագրեր.
6) բանկերում բացում է Ընկերության հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ.
7) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

8) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին, ինչպես նաև աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ:

9) իրականացնում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

Կազմված է «02» «հոկտեմբերի» 2019 թ.
Բաղկացած է 2 թերթից

Ընդամենը 2 օրինակ
ՕՐԻՆԱԿ 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ՔԱՌՅԱԿ ՄԵԴԻԱ» ՓԲԸ
բաժնետերերի
«02» «հոկտեմբերի» 2019թ.
կայացած ժողովի թիվ 2արձանագրությամբ
տնօրեն՝ Արամ Անտինյան
«02» «հոկտեմբերի» 2019թ.

[redacted]

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ արդարադատության նախարարության
իրավաբանական անձանց պետական ռեգիստրի
գործակալության
կողմից

«17» «դեկտեմբեր» 2018թ.

գրանցման համար՝ 286.120.1050326
ՀՎՀՀ՝ 00481235
17.12.2018թ.-ին գրանցված [illegible]ության թիվ --
փոփոխությունը գրանցվ[illegible]ան անձանց
պետական ռեգիստ[illegible]ողմից

«_[illegible]

աշխատակից՝ _____ _____

«ՔԱՌՅԱԿ ՄԵԴԻԱ»
Փակ բաժնետիրական ընկերության

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
(փոփոխություն)

«Քառյակ Մեդիա» ընկերության կանոնադրության 1.2 կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«Ընկերության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Չարենցի փ. 1Բ »: